



Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

ՆՏԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆԸ



ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ

ՄԱՐԿԱ

ՏՈՒՆՈՒՄ

Մարտի 10, 1880 թ. հինգ

Մարտի 10, 1880 թ. հինգ

Հանրապետության



Պետության

30, իսկ գրքերը 30 թվական

1880 թ. հինգ 10-ին

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ

ՄԱՐԿԱ

ՏՈՒՆՈՒՄ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՄԱՐԿԱ
ՏՈՒՆՈՒՄ
Մարտի 10, 1880 թ. հինգ
Մարտի 10, 1880 թ. հինգ
Հանրապետության
Պետության
30, իսկ գրքերը 30 թվական
1880 թ. հինգ 10-ին
ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ
ՄԱՐԿԱ
ՏՈՒՆՈՒՄ
ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ
ՄԱՐԿԱ
ՏՈՒՆՈՒՄ



ՀԱՆՐԵՍ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هازا كيداق —
مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 23

10 ԱՊՐԻԼ 1902

ԴՊՐՈՑԻՆ ՄԷՋ

Տեսնե՞ք սա տղերք՝ պրսակն իր մօրկան,
Ձեռքը փրական,
Վարպետին մօտիկ նստեք խելանի,
Համարը կ'ուսնի:

* * *

Դեռ հինգ տարու է՝ պղծիկ Յովակիմ,
Կ'որոնայ այք բեն զիմ.
Համարն երբ փոխե հանչնայ դա եչ գա,
Պիտի տամ ընծայ:

Այսօր եւ կամ շատ շատ օր մը յետոյ
Կ'առնեք է, ր, ք,
Ու ժե, ինի, լիւն՝ նեղելով ժպտուն,
Կը խաղայ տուն տուն:

Ի՞նչ անուշ խանդով իր լեզուին տակեն
Կ'եկայ խե, ծա, կեն.

Ու ինչ շքնորհիւ, փափուկ, խանդաղաս,
Կ'ըսեք հօ, ձա, դաս:

Հին ծանօթի պես՝ պիտի պիտի՝ նե, մեն, յի,
Իրեն կը նայի:
Նու շա, ո ըսես, ալ գաղտնիք չունի,
Յայտնի կամ գաղտնի:

Ձե, հղնիմ ուղեղն անոր չը տանջե
Պիտի չա, պե, ջե.
Ձը պիտի ցրցուէ գիծեր մը ծուռ, սեւ,
Անգուրք ու, սե, վեւ:

Իր վառ աշխոյժին յօժար պիտի ձօն
Բերենք տիւն, րե, յօն.
Հիմակ անըրխալ, շիտակ կը հեգե,
Մինչեւ հիւն. փիւր, ֆե:

* * *

Համբոյրներ նակսիդ, ուր նուրբ համեմարի,
Շող մ'է կը վառի.
Պիտի՝ դուրս քլաւ մարդկութեան, ծնողքին,
Մարգարիտն անգին:

1902 Մայիս 7
Տարբէնտէ

Մ. Ա. ԹՈՒՐԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱՆԻ ԹԻԻՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԵՋ

« Հաստատել խորհելու, զգալու գործելու սովորութիւններ. ահա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Ա. — ԿԵԱՆՔՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԵՋ

24. — ՈՐդիական ու եղբայրական անձնութիւններ

Վերջերս Գաղղիոյ Ակադէմիայի ժողովն Առաքինութեան մեղանակը տուաւ տարիքոտ օրիորդի մը, որ տասը տարեկան հասակէն սկսեալ կ'աշխատէր իր ծնողքին և իրմէ փոքր եղբայրներուն և քոյրերուն համար:

Ամբողջ իր երիտասարդութիւնը անցուցած էր հիւանդ ու տկար ծնողքը խնամելու եւ իրմէ փոքր քոյրերն ու եղբայրներուն հոգ տանելով, որոնք տակաւին չէին կրնար աշխատիլ իրենց ապրուստը ճարելու համար: Առաջարկուած ամուսնութիւնները մերժած էր ըսելով թէ չկրնար երեսի վրայ թողուլ անոնք, որոնք իրեն խնամքին կը կարօտէին: Եւ կրցած էր իր ծերունի ծնողքին աչքերը գոցել՝ որոնք երջանիկ ըրած էր. եղբայրներն ու քոյրերը ամուսնացուցած էր և ինք ծերացած՝ առանց բնաւ իր վրայ խորհելու: Իր երջանկութիւնը կը կայանար ուրիշները երջանիկ լնելուն մէջ:

Ձեզմէ չպահանջուիր այս պառաւ օրիորդին պէս հերոս ըլլալ եւ ոչ ալ առաւօտէն մինչեւ երեկոյ ձեր ընտանիքին նուիրուիլ: Բայց ձեզի կ'ըսուի որ հիմակու ընէ որդեական ու եղբայրական անձնութիւններ սովորութիւն ընէք: Երբեմն երբեմն դուք ձեզի հակառակեցէք՝ ձեր մօրը, քրոջը եւ եղբորը հաճոյք պատճառելու համար: Սովորեցէք ո՛ր եւ է բանէ մը զրկուիլ անոնց հաճելի ըլլալու համար: Պիտի տեսնէք որ ձեր սրտին ուրախութիւնն եւ խղի վկայութիւնը ձեր անձնութիւնը պիտի վարձարէ:

25. Բարի եւ չար օրինակ

Ձեր ամենակարեւոր պարտականութիւններէն մէկն է ձեր ընտանիքին մէջ լաւ օրինակ տալը, ճիշդ այն պատճառաւ որ դուք եղբայր և քոյր էք և միեւնոյն ընտանիքէն ըլլալով իրարու վրայ աւելի ազդեցութիւն ունիք և ձեզմէ իւրաքանչիւրը տրամադրու է նմանիլ տեսածին ու լսածին:

Եթէ ձեզմէ մէկն առաջարկէ այնպիսի բան մ'ընել որ ձեր խիղճը մերժէ՝ մի ընէք: Ընդդիմացէք գէշ խորհուրդի մը, բարի օրինակ տուէք այնպիսիին՝ որ հակամէտ է մոլորուելու: Միշտ քաղցրաբարոյ, քաղաքավար ըլլալով, բոլոր պարտականութիւնները ճշդապահութեամբ կատարելով, ուրիշները ստիպած կ'ըլլաք ձեզի նմանելու:

Գէշ օրինակը փոխանցիկ հիւանդութեան պէս է. անոր մօտեցողները կը վարակուին մէկը միւսին ետեւէն: Այսպէս մարդիկ չար եւ մոլի կը լինին միշտ իրենց առջեւ անոնց օրինակը տեսնելով: Երբեք գեւ օրինակ չստն:

26. Գաղսնապահ եղիք

Երբեմն ձեր հայրն ու մայրը ձեր ներկայութեան ընտանեկան, չահու կամ սրտի վերաբերեալ գործերու վրայ կը խօսակցին: Ուրիշ անգամ կը յանդիմանին ձեր եղբայրը կամ քոյրը: Երբեմն ալ քիչ թէ շատ տաք խօսակցութիւն մը կ'ունենան օտարականի կամ ազգականի մը հետ եւ կրնայ վիճարանութիւն մը յառաջ գալ: Եւ կամ ձեր ճանցած մարդոցմէ մէկուն կամ միւսին վրայ խորհրդածութիւն մը կ'ընեն: Երբեք մի՛ երթաք պատմէք ինչ որ լսեցիք կամ տեսաք ձեր տանը մէջ:

Պատիկ եւ դեռատի աղջիկներուն կը յանդիմանեն անգաղտնապահ և շատախօս ըլլալին: Կրնանք մեր մէջ խոստովանիլ թէ մասամբ ճշմարիտ է ասիկա: Պէտք է զգուշանալ այս գէշ պակասութիւնը ունենալէն: Շատ ընտանիքներու մէջ դժբաղդութիւններ հասած են տղայոց անգաղտնապահութենէն և շատախօսութենէն: Տղայք պէտք է հեռանան, երբ կը հասկնան որ հայրն ու մայրը կարեւոր բանի մը վրայ կը խօսին. խի եթէ անոնց քով կը մնան, պէտք է իմացածին իրենց պահեն: Դեռասի աղջիկ

մը որ գաղտնիք մը պահել չգիտէ լուրջ ին մը պիտի չդառնայ :

27. Ընտանիքին ծառաները

Ձեր բնասանիքին ծառաները իբրեւ բարեկամ նկատեցէք : Անոնք բնորոշին կը կոչուին , այսինքն տանը և ընտանիքին կապուած : Շատ անգամ սուր քով հօր և մոր տեղ կը բռնեն , ուրեմն անոնք վստահութիւն չահած են և եթէ անարժան ըլլային ծնողներդ ձեր քովը չէին դներ :

Հետեւաբար անոնց հետ քաղցրաբարոյ և քաղաքավար եղէք : Անոնց մի հրամայէք այս կամ այն ընել , այլ շնորհալի կերպով խնդրեցէք , միշտ աւելցնելով « ի՞նչ երեմ » , մի մոռնաք շնորհակալ ըլլալ ամէն անգամ որ պէտք լինի : Մի ծաղրէք անոնք , անոնց գլխուն խաղեր մի՛ խաղաք :

Փոքրիկ , դեռատի աղջիկ մը շատ լաւ կրնայ տան հին սպասուհին յարգել , առանց անոր հետ մասնաւոր բարեկամութիւն մը հաստատելու : Պէտք չէ որ իրեն բարեկամ կամ մտերիմ ընէ : Բարեկամի ու մտերիմի դերը միայն մօր կը պահակնի :

28. Ընտանիքի մէջ վեճ մի յարուցանէք

Ձգուշացէք ընտանիքի մէջ վեճ յարուցանելէ : Եթէ ձեր եղբորը կամ քրոջը հետ համակարծիք չէք , մի բարկանաք , մի աղաղակէք , մի հայհոյէք : Ասիկա բոլորովին անօգուտ է , նախ որ բարկանալով չէք կըրնար մէկը համոզել , երկրորդ՝ թերեւս դուք կը սխալիք , վերջապէս վիճաբանելով կը տկարացնէք եղբայրական բարեկամութիւնը :

Աւելի լաւ է հաճութեամբ տեղի տալ : Ասոր համար պէտք չէ ծողրական կերպարանքով մը ժպտիլ , իբրեւ թէ գթալով է որ չէք ուզեր հետը վիճիլ : Այս կերպով լռութիւն պահելը ամօթ է : Պէտք է ըսել . « Ձեմ ուզեր վիճիլ երկար ժամանակ , որովհետեւ կը վախճամ թէ կրնամ բարկանալ : Փոխեմք խօսակցութիւնը , ուրիշ բանի վրայ խօսինք » : Շատ անգամ հաշտութեան փոքրիկ միջոցներով է որ ընտանիքին մէջ խաղութիւն եւ համերաշխութիւն կը պահուի :

29. Լաւ տրամախոհութիւն մի

Ձեր մայրը ձեզի բարկացաւ , դուք պահ մը կը խորհիք հեռանալ անկէ և տրանձալ . ընդհակառակը վաղեցէք դէպի ան , անոր գիրկը ինկէք , խնդրեցէք որ ձեզի ներէ : Պիտի տեսնէք թէ որչափ հանգիստ սիրտ պիտի ունենաք :

Դուք վիճած էք ձեր եղբոր կամ քրոջ հետ , ասոր համար քէն մի պահէք և իրիկունը առանց հաշտուելու մի քնանաք , քնքուշութեամբ և սիրով համբուրեցէք դիմենք : Ձեր հասակը աղջիկ մը կը ճանչնամ , մտացի ու խոհուն , որ երբէք չէր դժկամակէր , երբ կը տեսնէր որ իրեն քոյրը ու է պատճառով հետը կը կռուի , ըսել անոր « Օն , Ձապէլ , համբուրենք իրար , մոռնանք ստիկա . կը կարծես թէ այս փոքրիկ բանին համար մենք իրարու հետ այլ եւս պիտի չխօսինք մինչեւ մեր կեանքին վերջը : Ո՛չ , այնպէս չէ » . ուրեմն անմիջապէս հաշտուինք , որչափ շուտ ըլլայ՝ այնչափ աղէկ է » : Եւ կը համբուրէր իր քոյրը , որ շուտով դինարութիւն կ'ըլլար : Երկուքն ալ կը խնդային և ամէն բան կը լինէր : — Ինչո՞ւ համար հաշտութեան մէջ անոնց չնմանիք , երբ շատ անգամ նմաներ էք անոնց փոքրիկ վեճերու մէջ :

30. Դեռ գլխուցումը

Երբ հայրդ կամ մայրդ քեզ կը համբուրեն , բնաւ մի խորհիր թէ արդեօք քեզ աւելի կը սիրեն ու կը գգուեն քան թէ եղբայրներէդ մէկը : Բաւականացիր անոնք սիրելու և անոնցմէ սիրուելու ուրախութեամբ :

Եթէ նախանձուտ ես , կը նշանակէ թէ տոկաւին քու սիրտդ կազմակերպուած չէ և դու տակաւին չդիտես թէ ի՞նչ է տրդարութիւնը : Ծնողները կրնան տարբեր կերպով վարուիլ իրենց զաւակներուն հետ առանց մէկը միւսէն նախամեծար համարելու : Բայց աղայոց տարբեր բնաւորութիւնը դիմենք-կատարէ ոմանց հետ քաղցրութեամբ վարուիլ , անոնց հետ խտտութեամբ :

Կուգի՞նք աչն դէշ գգացումին փորձն երբէք չունենալ , սիրէ ծնողներդ , անոնց հետ այնպէս վարուէ , որ քեզ մեղադրելու բան մը չունենան և ամէն բանէ առաջ քու խղ-

ծիդ վկայութիւնը բնտուէ: Դու քեզ հաշտ եղիր, ամէնուն հետ հաշտ կ'ըլլաս:

31. Ծնողներէն հետու եղած ժամանակ

Արդեօք ծնողքնիդ ձեզմէ հետու եղած ըլլալուն համար ձեզի աւելի քիչ կը սիրեն կամ կը մոռնան: Անշուշտ ոչ: այնպէս չէ՞: Կամ անոնցմէ հեռի ըլլալով քիչ կը խորհիք իրենց վրայ և ձեր սէրը կը քիչնայ՝ ո՛հ, ո՛հ, տղաքս:

Հեռուէն ձեր սիրոյն վկայութիւնը տըռէք: Իրեցէք անոնց կանոնաւոր կերպով, և երկարօրէն պատմեցէք անոնց ինչ որ ձեզ կը շահագրգռէ, ինչ որ կը պատահի ձեզ, լաւ թէ գէշ: Վստահ եղէք որ, ձեր նամակներուն անհամբերութեամբ կ'սպասեն և թէ ձեր խօսքերն անոնց սրտին մէջ արձագանք պիտի գտնեն:

Աւա՛ղ, երբ աւելի մեծնաք, թերեւս ստիպուիք զանոնք թողելու: Այն ատեն արտասուալի աչքերով պիտի յիշէք այն գեղեցիկ օրերը, որ անոնց քով անցուցած էք: Դուք պիտի տեսնէք անոնց ծերանալը այն տան մէջ ուր երբեմն լի էր տղայոց ուրախութեամբ և ծիծաղներով: Երբ հեռի էք ձեր ծնողքէն, յիշեցէք որ ձեր նամակներն միայն կրնան անոնց ուրախութիւն պատհասել, ուստի գրեցէք:

32. Ընտանիքին մեծարանք

«Որդիական մեծարանք» ասացուածը որ երբեմն կը գործածեն, կը ներկայացնէ այն բոլոր զգացումներու ամբողջութիւնը զոր կ'ունենանք մեր հօր, մեր մօր և այն ամէնուն համար որ անոնց կապուած են:

Որդիական մեծարանք պէտք է ունենալ. պէտք է ընտանիքն յարգել: Գիտէ՞ք ինչպէս: Զեր եղբայրներուն և քոյրերուն կատարեալ միացած մնալով և անոնց հետ յաճախ ձեր մանկութեան օրերուն յիշատակին վրայ խօսելով:

Ընտանեկան մեծարանք ու յարգանք ի գործ դրած կ'ըլլաք ձեր հայրենի տունը սիրելով. այն վայրը ուր ծնած էք, ուր մեծցած էք, ուր ամէն բան ձեզ կը յիշեցնեն ձեր հայրը, մայրը, ձեր եղբայրներն ու քոյրերը. փափաքելով այն սիրելի տունը պահել և կտրելի եղածին չափ յաճախ հոն վերադառնալ: Իարձեալ ընտանեկան մեծա-

րանք կիրարկած կը լինիք ընտանիքի մէջ խնամքով պահելով այն առարկաները որ ձեզի հասած են ձեր նախահայրէն, այսինքն ձեր մամերէն, պապերէն: Կը տեսնէք, այս բոլորը խորապէս կը յուզեն ձեր սիրտը. և ձեր ընտանեկան սիրոյ կապը կը հաստատեն, դուք, տղաք՝ որ ապագան էք, ձեզի կը միացնեն ձեր սիրելի ծնողքն՝ որ ներկան են և ձեր մեռած նախնիքն՝ որ անցեալն են:

Այսպէս ընտանիքը կը շարունակուի մեծ շղթայի մը պէս, որուն իւրաքանչիւր օղակը հաստատուն կերպով միացած է իրարու՝ գորովանքով, յարգանքով, յիշատակով:

ՏԻԿԻՆ Փ. ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ



ՏՈՒՆԿԵՐԸ

Տարեկիցներուս

Տղաքնե՛ր, դուք թուփին մեծնալը տեսաք: Տեսաք անոր ճիւղերն ու ծաղիկները, ու առանց մտածելու անցաք: Զեր մանկական խաղերուն համար, անոր ճիւղերէն մին կտրեցիք. քաղեցիք անոր ծաղիկները փունջ մը շինելու համար ու չմտածեցիք:

Տղաքներ, վայրկեան մը նայուածքնիդ խոնարհեցուցէք տունկին վրայ ու զարմացէք: Աստուծոյ ձեռքին հրաշալիքներէն մէկն է ան: Երբ ցուրտը դադրի ու անուշ հով մը սկսի փչել դաշտին մէջ, կը տեսնէք որ կ'ուռին մատաղ պտուկները, որոնք կը պարուռանան ծաղիկները պաշտպանող տերեւները: Այս դեռաբոյս տերեւները տկար ու նուրբ են: Աստուած է անոնց պատուպարան մը՝ պատեանին մէջ որ զանոնք կը պատէ: Կոկոնը կը բացուի: Ծաղիկը կը սարգէ իր գունաւոր քերթիկները: Բայց տեսէք իմաստուն բնութիւնը՝ ծաղիկին յատակը պահուած է ծիւր, ուրկէ պտուղը դուրս պիտի ելլէ: Ծառին զարդը միայն կարծուած այս ծաղիկը՝ դեռ այսօր տկար ծիլին պատուաբանն է:

Սըվազ

Թըգմ. Ե. ՀԱՊԷՇԵԱՆ



ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Դ.

Տ Ե Ր Ե Ի

Պատիկ բարեկամներ, ցողունին վրայ արդէն քիչ ու շատ ծանօթութիւն տուինք, կ'արժէ ուրեմն որ, անկէ ետք խօսինք. եւ նոյն իսկ քիչ երկարօրէն՝ տերեւին վրայ:

Է՛հ, անշուշտ ամէնքնիդ ալ կը ճանչնաք թէ տերեւը բոյսին որ գործարանն է: Լաւ ուրեմն, այս թթենիին տունկին վրայ գտնուող տափակ ու կանանչ մասերը՝ որ տեղ տեղ դրուած են անոր վրայ, կը կոչուին տերեւ. ասոնք գրեթէ միշտ կանանչ կ'ըլլան, բացի այն մասնաւոր պարագաներէն՝ ուր կը կարմրանան, ինչ որ շատ անգամ առաջ կուգայ արեւհարութենէ, կամ կը դեղնին՝ երբ արդէն աշունը եկած ըլլալով տերեւները պիտի թափին բազադրուելու համար հողին հետ՝ և յաջորդ տարի նոր նոր տերեւներ յառաջ բերելու համար ծառերուն վրայ:

Հոս որոշենք այն տարբեր նկարագիրները՝ որոնք զանազանութիւններ կը դնեն տերեւին, ցողունին և արմատին միջեւ: Նախ, ասոնց արտաքին ձեւը նկատողութեան առնելով, կը տեսնենք որ տերեւը տափակ մաս մըն է, և անոր վրայ կրնանք որոշել իր աջ ու ձախ կողմերը: Բայց ցողունը և արմատը այս յատկանիշը չունին: Կը տեսնենք որ շատ մը ծառերու ցողունները և արմատները անսահման կերպով կ'աճին. մէկը՝ արմատը, կ'երկարի՛, կ'երկարի՛ միշտ հողին մէջ. վարը, խիստ վարը, հեռո՛ւն. միւսը՝ ցողունը, դէպի վեր և լայնակի անսահման աճում մըն ալ ինք ունի: Իսկ տերեւը ունի որոշ սահման մը աճելու՝ ուրկէ ասդին չկրնար անցնիլ բնաւ:

Այս քանի մը հարեւանցի ծանօթութիւններէն ետք, կրնանք քննել տերեւի արտաքին և ներքին կազմութիւնները, բան մը՝ զոր հարկաւոր է գիտնալ բոլորաբանական գործարանագրութեան մէջ, ինչ որ պիտի ըլլայ մեր գրութեան առարկան, գէթ հիմակուհիմա: Ահաւասիկ առնենք սա ճիւղը՝ որ իր վրայ քանի մը տերեւներ ալ կը

կրէ (Պատ. 1): Առաջին անգամ նշմարելիք կէտը սա է որ տերեւը կամ տերեւները կը պած են ցողունին բարակ մասով մը՝ որ կը կոչուի սերեկոթ. տերեւի մը շրջապատը կը կոչուի եզր. տերեւին տափակ, կանանչ եւ գլխաւոր մասը՝ որ տերեւին ամէնէն անհրաժեշտ մասն է, կը կոչուի սպառուած: Շատ անգամ կոթանին (տերեւկոթ) ցողունին կպած տեղը կը գտնուի պզտիկ մաս մը որ կը կոչուի պասեցիկ: Ամէն տերեւ չի կրնար ունենալ այս բոլոր մասերն ալ, բայց ամէն տերեւ ունի անպատճառ սպառուածը որ ամէնէն հարկաւոր մասն է: Քանի մը տունկերու, օրինակի համար մանիշակին և



Պատ. 1

վարդենիին տերեւները ունին սպառուած, տերեւակոթ և պատենիկ մը՝ որ ընդ անուանուող երկու պզտիկ տերեւանման մասերու բաժնուած է. ուրիշներու՝ ինչպէս խմիլին (անթիլիֆ) տերեւներն ալ ունին այս մասերը՝ բայց սա կայ որ պատենիկը ամբողջ է. ուրիշներ ալ՝ ինչպէս ցորենին, գարբին, եգիպտացորենին տերեւները, ունին սպառուած՝ եւ պատենիկ. բայց ո՛չ տերեւակոթ, ուրիշ տերեւներ ալ կան որ մի՛ միայն սպառուած ունին:

— Ի՞նչ են արդեօք սա ճերմակ բարակ թելաձեւ մասերը՝ որ տերեւին վրայ անդին ասդին տարածուած են, կը հարցնէք ինծի:

— Ասոնք կը կոչուին սերեւաշիղեր: Տերեւին մէջտեղը գտնուող գլխաւոր մէկ ջիւղը՝ ուրկէ կ'ելեն միւսները, կը կոչուի միջնաշիւղ, իսկ միւսները երկրորդական կամ երրորդական տերեւաշիւղեր են: Զանազան

տեսակ տերեւներու վրայ տերեւաջիւղերուն շարքը տարբեր կ'ըլլայ:

Քանի որ կ'ուզենք տերեւի մը ներքին կազմութիւնն ալ քննել, պիտի առնենք ո՛ր եւ է տերեւ մը. հիմա լայնակի կտրենք անոր սպառուածը: Ինչպէս տեսանք արդէն և պիտի տեսնենք, բոյսին բոլոր գործարանները դուրսէն պատուած են թաղանթով մը որ վերնամաշկ կը կոչուի. ուստի տերեւին այս մասը՝ զոր կը տեսնենք, վերնամաշկն է, այս վերնամաշկին մէջ կը տեսնենք տերեւաջիւղերուն կտրուածքները:

— Բայց ասոնցմէ առաջ կ'ուզենք իմանալ թէ ինչո՞ւ տերեւները կանանչ կ'ըլլան:

— Որովհետեւ տերեւին ներքին բջիջները կամ խորքիկները, (եթէ գիտէք որ բոլոր ապրող մարմինները խորշիկներէ կազմուած են), կը պարունակեն սերեւակաւցալ կոչուած գնդիկներէն:

Վերնամաշկը իր վրայ ունի ծակոտներ՝ որոնք բերան կը կոչուին. ասոնք են որ տերեւին ներքին մասերը հաղորդակցութեան կը դնեն մթնոլորտին հետ, եւ բնականապէս կը գտնուին տերեւին ստորին երեսին վրայ. բացի ջրային բոյսերու տերեւներէն՝ որոնց երեսի կողմին վրայ է որ կը գտնուին այս բերանները: Այս բերաններուն թիւը կը փոխուի զանազան տեսակ բոյսերու համար, օրինակի համար, հաշուուած է որ հիւրիկի տերեւին մէկ քառ. բթաշաւիին վրայ 12,000ի չափ բերաններ կան, իսկ շահութարմին վրայ 40,000: Փոփոխական է նաեւ բերաններու դիրքը:

Տերեւներուն ցողունին վրայ առած դիրքը շատ մը բնապատումներու ուղադրութիւնը գրաւած է: Պինէ Զուիցերիացի իմաստասէր-բնապատումը, Պրօն եւ ուրիշներ իրենց քննութեան առարկան ըրած են այս դիրքը՝ որ շատ կը տարբերի զանազան սունկերու վրայ: Առաջին ակնարկով մը պիտի կարծէինք որ տերեւները շատ անկանոն կերպով չարուած են ցողունին վրայ, սակայն ուշադիր քննութիւն մը պիտի կրնայ դիւրութիւնով ցուցնել թէ անոնք շատ կանոնաւոր կերպով չարուած են: Առնենք գեղձի ցողուն մը կամ ճիւղ մը, եւ ասոր վրայ մեր ուշադրութեան առարկան ընենք ո՛ր և է միջնահանգոյց մը կազմող երկու տերեւներ. ա-

սոնք ուղղաձիգ գիծի մը վրայ հաստատուած են, եւ ասոնց ուղղութեան մէջ բնականաբար գտնուող տերեւ մը. բայց երբ ճիւղը դարձնենք կը տեսնենք որ այս երկու տերեւներուն գծած սահմանին մէջ ուրիշներ ալ կան. հիմա այս տերեւներուն ճիւղին կպած տեղերը գիծով մը իրարու միացընենք, ահա՛ կազմուեցաւ պարուրաձեւ գիծ մը որ երկու շրջաններ ունի (Պատկ. 2) եւ իր վրայ կը կրէ հինգի չափ տերեւներ՝ որ մի եւ նոյն գիծին վրայ չեն իյնար բայց ի այն երկու տերեւներէն:

Բարեկամներ, անշուշտ դուք շատ ան-



Պատկ. 2

գամ առիթ ունեցած էք պատկեր դաշտերի եւ պարտէզները՝ ուր տեսած էք բնազան տեսակ տերեւներ: Կր ճանչնաք որի մէջ, վարդին, սիւսին եւայլն տերեւները և մտածած էք որ անոնք իրարմէ շատ կը տարբերին. հիմա այդ տարբեր տեսակ տերեւներուն առած անուանակոչութիւններուն վրայ պիտի խօսինք համառօտակի: Թէեւ տերեւները շատ տեսակներու կը բաժնուին, սակայն անոնք գլխաւոր երկու կարգերու բաժնուած են, պարզ սերեւներ և բաղադրեալ սերեւներ: Պարզ րոտած տերեւներուն սպառուածները մի՛ միայն մէկ կտորէ կազմուած են: Այս տեսակ տերեւները շատ ստորաբաժանումներ ունին:


Կը տեսնենք որ վարդին, կեռասին ևլն՝ տերեւներուն եզրը՝ սղոցի ատամներուն պէս կտրուած է, այս տեսակ տերեւները կր կոչուին աւալնաձեւ կամ սղոցաձեւ տերեւներ (Պատկ. 1): Կան ուրիշ տերեւներ՝ որոնց ըստ սպառուածին եզրերը այս տեսակ կտրուածք-

ներ չունին, ասոնք ալ կը կոչուին ամբողջ կամ կասարեալ տերեւներ: Սօսիին, որթին, թղենիին եւայլն տերեւներուն սպառուածը խորունկ կտրուածքներով բաժնուած է քանի մը ըլթակներու, որոնք կարծես մէկ մէկ զատ տերեւ են. այս տեսակներն ալ կը կոչուին բլթակաւոր տերեւներ (Պատ. 3):



Պատ. 3

Շատ անգամ կը տեսնենք տերեւներ՝ որ կազմուած են գլխաւոր միջնաձիղի մը շուրջը հաւաքուած տերեւիկներէ. այս տեսակ տերեւներն ալ կը կոչուին բաղադրեալ տերեւներ (Պատ. 4): Ժողովրդական լեզուով



Պատ. 4

Ափսխա ըստած բոյսին տերեւը կրնայ ընտիր օրինակ մը ըլլալ: Բաղադրեալներն ալ իրենց կարգին ունին շատ մը տեսակի ստորաբաժանումներ՝ որոնց վրայ խօսիլ չարժեք հոս:

(Շարունակելի)

ԱՇՈՏ 3. ՊԱՉՊԱՉԵԱՆ



ԱՆԻԾՈՒԱԾ ՏՂԱՆ

(Շար. 22րդ. քիւնն եւ վերջ)

— Ա՛հ, դժուար էք, Պ. Լէօնար, պատասխանեց ժիւլ, որ հակառակ իր գծադրութեան ուսուցչին կրած փողկապին, վերարկուն ու փեղոյրին, ճանչցաւ զայն ծայնէն իսկ: Առէ՛ք, հաճեցէք այս թղթապանակը հօրս յանձնելու և ըսէք իրեն թէ ... չէ՛ բան մի ըսէք... գիշեր բարի՛. Պ. Լէօնար, գիշեր բարի, աւելցուց լալէն, կենդանագիրը կարկառելով ուսուցչին՝ որ ապշած էր այս խօսքերէն, գիշեր բարի. ներեցէք բոլոր չարութիւններս. երէկ ես էի ձեր կեղծամը պահողը, դուք զայն պիտի գտնէք թուղթերու կողովին մէջ: Գիշեր բարի, Պ. Լէօնար:

— Ա՛հ, չարածճի, բայց... լա՛ւ, լա՛ւ, ո՛ւր կ'երթաս ուրեմն, ըսաւ Պ. Լէօնար, տեսնելով որ ժիւլ իր ձեռքէն ճողպարելով փախչելու փորձեր կ'ընէր: Հօրդ քով հետս չե՛ս երթար:

— Ո՛հ, ո՛չ, երբէք, ոչ, սիրելի ուսուցիչս. պատասխանեց ժիւլ: Այլեւս չպիտի տեսնեմ զայն, ո՛չ ալ ձեզի... բայց ձեռքս թող տուէք, Պ. Լէօնար, զիս մի նեղէք:

Այս վերջին բառէն ուսուցիչը թուցուց իր մօտները, որմէ ժիւլ օգտուելով ինքզինքը ազատեց և սկսաւ վազել դէպի Արուեստից կամուրջի կողմը:

— Բռնեցէ՛ք սա, ո՛ւր կը փախչի չարածճին, ըսաւ Պ. Լէօնար, զայն հալածելով ի՞նչ չարութիւն կայ արդեօք գլխուն մէջ. ժիւլ... ժիւլ... վայրկեան մը մտիկ ըրէ. կ'ուզեմ գիտնալ թէ Արուեստից կամուրջին վրայ ի՞նչ պիտի ընէ այս ատեն.

Եւ երբ խօսելով Պ. Լէօնար հասաւ Արուեստից կամուրջը, քանի մը խօսք եւս ըսաւ բարձր ձայնով և բարկութեամբ ետեւէն հասաւ:

— Դուն պզտիկ դատարկասուն մըն ես, քեզի պաշտպանել կ'ուզեմ, պզտիկ ստահակ ժիւլ տեսաւ որ չպիտի կրնար դիմադրել գլուխը կախեց ու սպասեց, տխուր կերպով մը մըմնջելով:

— Ինչ որ է, եթէ ուզէի...

Դ .

Պ . Պրըվան ծառային հրամայելով որ ժիւլի ուտելիք տանի, դուրս ելաւ : Տիկին Պրըվան իր սենեակը առանձնացաւ արդու-
զարդը ընելու, Օրլէանի դուքսին տալիք պարահանդէսին պատրաստուելու համար :

Պր . Պրըվան ժամը իննին վերադարձաւ, սրտնեղած կ'երեւէր . տիկնոջ սենեակը մը-
տաւ և յայտնեց թէ թղթապանակը կոր-
սուած էր քսան հազար ֆրանքի դրամա-
տոմսերով :

— Ո՞ւր գացիք, հարցուց իր կինը :

— Ո՛հ, հազար տեղ, Վօլթէլ՝ գետնա-
փողպեղ, Սէնդ Օնօրէ, Ի՞նչ գիտնամ . շատ,
բաւոյն անցած տեղերս նայեցայ բայց կա-
րելի չեղաւ գտնել, կորսուած է, սիրելիս .
ալ խօսքը չընենք . . . արդեօք սպասուորը
ժիւլին ճաշ տարա՞ւ :

— Կարծեմ, ես բան մը չեմ ըսած :

Պր . Պրըվան հարցնելու համար դուրս
ելլելով, խռովայոյզ վերադարձաւ :

— Ժիւլ սենեակը չէ եղեր, փականքը
կոտրած գտեր են :

Տիկին Պրըվան ուժգին զանգակը զարկաւ
և աճապարանօք ներս մտնող ծառային հը-
րամայեց որ ժիւլը բերեն :

— Պարոնը տունը չէ, ըսաւ վերջինը,
այլայլած ձայնով մը,

— Լաւ գիտէ՞ք, հարցուց Պ . Պրըվան
խոսիւ՝ գոյնը նետած :

— Այո՛, պարոն, զայն ամէն տեղ փն-
տուեցինք . դռնապանը կը կարծէ թէ դուրս
ելած է :

— Դո՞ւրս ելած, պօռացին երկու ամու-
սինները, Աստուած իմ :

— Մօրեղբօրը տունը փնտուեցինք, բայց
չգտանք, աւելցուց սպասուորը, հիմա Պ .
Լէօնարին տունը մարդ դնաց :

— Դո՞ւրս ելած, կրկնեց Պր . Պրըվան
դէպի դուռը յառաջանալով, դո՞ւրս ելած,
զաւա՛կս . . . որդեակս :

Եւ առանց մտածելու թէ վերարկուն եւ
գլխարկը հանած էր, դէպի դուռը նետուե-
ցաւ դուրս ելլելու համար : Երբ յանկարծ
նրբանցքին դուռը բացուելով Պ . Լէօնար
երեւցաւ :

— Զաւա՛կս, ո՞ւր է զաւակս, պօռաց
Պր . Պրըվան զայն տեսնելուն պէս :

— Անոր վրայ լուր կը բերեմ, ըսաւ Պ .
Լէօնար, գլխարկն ու վերարկուն հանելով :

Դուք քիչ մը խիստ վարուելէք, Պ . Պրըվան :

— Իրա՛ւ է, իրաւ, պատասխանեց հայրը

— Եւ դո՛ւք, տիկին, անոր հետ արդար
չէք եղած, աւելցուց Պր . Լէօնար :

— Ո՛հ, Պ . Լէօնար, յանդիմանութիւն-
նիդ ետքի պահեցէք, առաջ ըսէք թէ Ի՞նչ
եղաւ խեղճ տղան :

— Գիտէ՞ք ուր գտայ զայն, տիկին,
Արհեստից կամուրջին վրայ : Իր հայրը զայն
անիծել է, գողի մը պէս բանտարկել է :
ան ալ ինքզինքը գետը նետել կ'ուզէր :

— Ո՛հ, զաւակս, մեռա՛ծ է, ճչեց Պ .
Պրըվան իր ծառային բազուկներուն մէջ իյ-
նալով :

— Ո՛հ, հայրիկ, մեռած չեմ, պօռաց
Ժիւլ իր հօրը գիրկը նետուելով, ո՛չ, 'ահա
եկայ, ահաասիկ, ո՛հ, խելքդ գլուխդ բեր
հայրիկ, խօսէ ինծի . ըսէ՛ թէ կը ներես
յանցանքներս, հայրիկ, հայրիկ :

— Զաւա՛կս, ըսաւ Պր . Պրըվան արցունքի
մէջ ողողած :

— Ո՛հ, մի լար հայրիկ, ըսաւ Ժիւլ լա-
լով, ես չատ չար եմ, չատ պինդգլուխ,
կարծելով թէ այլեւս դուն չպիտի սիրես
ինծի, կ'ուզէի ինքզինքս սպաննել, այլ ևս
ասանկ բան մտքէս պիտի չանցնեմ . ներէ
ինծի :

— Զսիրե՛լ այլ եւս քեզի, ըսաւ Պ . Պրը-
վան սրտին վրայ սեղմելով իր զաւակը եւ
համոյրներով ծածկելով անոր ճակատը, չը
ներե՛լ քեզի, անշնորհք :

— Եւ ինծի՞, Ժիւլ . կ'ուզե՞ս ներել, զա-
ւակս, ըսաւ քաղցր ձայն մը յուզուած շեշ-
տով մը :

Ժիւլ ետին դրածաւ, իր խորթ մայրը
ձեռքը կարկառեց :

— Ո՛հ, ես ալ անխրաւ եմ ձեզի դէմ,
տիկին, ըսաւ Ժիւլ առնելով խորթ մայրը
ձեռքը և բերանը տանելով :

— Մայրիկ . ըսէ, ամէն բան կը մոռնամ,
ըսաւ տիկին Պրըվան գգուելով զայն խան-
դաղատանօք :

— Այո՛, մայրիկ, ըսաւ Ժիւլ համարձակ :

— Պարոն Լէօնարի շնորհակալ ըլլալ կը
մոռնամ, ըսաւ Պ . Պրըվան դէպի գծագրու-
թեան ուսուցիչը յառաջանալով :

— Ինծի շնորհակալ ըլլալու բան չկայ,

սիրելի պարոն, ըսաւ Պր. Լէօնար: Դուք ձեր առաքինի օրինակները կանուխէն դըրողմած էք ձեր որդւոյն հոգիին մէջ ձեռնտու ըլլալու իր նմանեաց, եթէ ժիւլ հնազանդութիւն օգնելու համար կամուրջէն իջած չըլլար, չպիտի գտնէր ձեր թղթապանակը, պարոն, եւ իր մօրը կենդանագիրը տեսնելու իղձը, զայն գգուելու փափաքը չպիտի ունենար, իմ ուշ ատեն անցած միջոցիս:

— Ի՞նչ թղթապանակ, հարցուց Պր. Պրըվան:

— Ահաւասիկ, պատասխանեց Պ. Լէօնար, զայն անոր ներկայացնելով, անշուշտ զայն կորսնցուցած էիք:

— Բոլորովին զայն մոռցեր էի, ըսաւ հայրը, չլիտանալով իր զաւակը դիտելէ եւ զայն գգուելէ:

— Ինծի մէկը չսիրե՞ր, ըսաւ տղու ձայն մը:

Անոր դարձան. Ալֆրէտ, միւս սրահի անկիւնէն ամէնը կը դիտէր և չէր համարձակէր խօսելու:

— Շատ կը ցաւիմ գծագրութիւնդ չը սրբագրելուս համար, ըսաւ ժիւլ եղբորը դէմ վազելով ու զայն գրկելով:

— Ես ալ քեզ կսմթելուս համար, պատասխանեց Ալֆրէտ:

— Ատոնք մոռնանք, եղբայրս ըսաւ ժիւլ:

— Նորէն չե՞ս սրբագրեր:

— Ո՛չ թէ միայն այն, թերեւս ուրիշ մըն ալ, պատասխանեց ժիւլ ժպտելով:

— Իմ նոր կեղծամ, կանչեց պարոն Լէօնար:

— Թէրեզէն փնտռեցէք, պատասխանեցին:

— Ահաւասիկ ձեր կեղծամը, զոր աղբի կողովին մէջէն գտայ:

— Ես ձեզի պիտի փոխարինեմ, Պ. Լէօնար, ըսաւ Պ. Պրըվան, յետոյ իր կնոջ դառնալով աւելցուց թէ՝ կ'երթամ հաղուելու, սիրելի բարեկամ, եւ կէս ժամէն պիտի կատարեմ ձեր հրամանները:

— Եթէ դուք մոռցած էք թղթապանակնիդ, Ատրիէն, ըսաւ տիկին Պրըվան շփոթութեամբ մը, ես ալ պարահանդէսը մոռցած եմ: Խեղճ ժիւլ ճաշել չուզե՞ր արդեօք:

— Այդ մասին բնաւ չեմ մոռածեր իսկ, ըսաւ ժիւլ, նոյնպէս հաւին իւզոտ ըլլալէն դժգոհ չպիտի ըլլայի, նոյն իսկ եթէ թէրեզ զայն քիչ մը աւելի այրած ալ ըլլար:

— Եւ յետոյ, ձեզի պիտի բացատրես Պ. Լէօնարի խօսքերը՝ զոր լաւ չկրցայ ըմբռնել, այնպէս չէ՞, սիրելի ո՛րդեակս, ըսաւ տիկին Պրըվան, չեղտելով իր վերջին բառերը:

— Այո՛, սիրելի մայրիկ, պատասխանեց փառելով տիկին Պրըվանի վիզը:

— Վերջապէս... ըսաւ երիտասարդ կինը, զայն գրկելով:

— Ասոր համար բնաւ խեղճ մայրս չէի մոռցած. ըսաւ ժիւլ յուզմամբ:

— Ո՛չ, վասն զի ես միշտ ուզեր էի բուռն սիրով քեզ յիշել տալու զայն, ըսաւ տիկին Պրըվան, իր ամուսինը դիտելով:

— Լաւ, ըսաւ ժիւլ, ձեռուրները համբուրելով, եւ յարեց, ա՛հ, պիտի ընթրեմ, վասն զի անօթութենէս կը մեռնիմ. եւ ժիւլ տեսաւ թէրեզը, որ ձեռքը սկաւառակներով կուգար, միոյն վրայ հաւի թեւ մը դրուած:

— Տիկին, ապուրը շատ չէ՛, ըսաւ թէրեզ, պնակները սեղանին վրայ դնելով:

— Երբ մէկը հեռու տեղէ մը գայ, ըսաւ ժիւլ, իր հացէն եւ հաւէն խածնելով, անոր հանգստութեանը շատ հոգ կը տանին:

Թարգմ.

Կ. ՏէՎԷԼԵԱՆ

ԹՐԱՆՍՎԱԼ

(Շար. եւ վերջ)

Նախագահ Քրիսկեք կը մեկնի Թրանսվալի.

— Բրէդօրիայի Անգլիացուց ձեռքը անցնելը բնաւ չվհատեցուց Պօէրները: Ատոնք պզտիկ խումբեր կազմելով ցրուեցան երկրին մէջ և ասպատակի պատերազմ մը սկսան մղել՝ ի գլուխ ունենալով Տէվէզ, Լիւքա Մէյէր, Երազմոս, Էւայլք: Սեպտեմբեր 12ին Քրիսկեք Թրանսվալի հողէն մեկնելով Լուրէնսօ-Մարքուէզ կը հաստատուէր (Բորդուէզ գաղութ): Ըսուեցաւ որ միտք ունի Եւրոպա երթալու և Լորտ Բոպէրդսի կողմէ:

Թրանսվալը Անգլիոյ միացուելուն համար բողոքելու :

Դեպի Լա Հե. — 1900 Հոկտ. 19ին, Նախագահ Քրիսկէր՝ Կեսերլանց հոլանտական մարտանաւը կը նստէր և Նոյեմբեր 24ին Բարիզ կը հասնէր : Հանրապետութեան նախագահը ընդունեց զայն էլիզէի ապարանքին մէջ : Երեսփ. ժողովը համակրանաց ուղերձ մը քուէարկեց : Նախագահ Քրիսկէր Բարիզէ մեկնելով Քօլօններ գնաց (2 Դեկտ.) և Վիլհէլմ Բ. ի հետ տեսակցութիւն մը

Պօէր խումբեր՝ Պօթայի, Տըլարէյի, Տէուէդի, Պէյէրսի, Քուինսիլէրի, Հերձօկի հրամաններուն տակ, միշտ կը նեղեն Անգլիացիները՝ ասպատակի կռիւներով, երկաթուղիներ օդը կը հանեն, պաշարի կարաւաններ կը կողոպտեն :

Տէվէդ՝ 2500 մարդու գլուխը՝ անցաւ սահմանագլուխը (17 Դեկտ.) և Քօլէզպէրկի վրայ քալեց : Տէ Աարի երկաթուղիի գիծը կտրեց՝ ուր հասած էր արդէն Լորտ Քիչնէր (Լորա Բոպէրդս Նոյեմբ. 30ին Լոն-



Պաւլոս Քրիսկէր

խնդրեց : Գերմանիոյ կայսրը բացէ ի բաց մերժեց զայն ընդունիլ հետեւեալ հեռագիրը ղրկելով. « Նորին Վեհափառութիւնը կը ցաւի որ արդէն եղած կարգադրութիւններ արգելք կ'ըլլան այդ օրերը՝ Նախագահ Քրիսկէրը ընդունելու » : Ամուսն 6ին Նախ. Քրիսկէր Լա Հէ մեկնեցաւ :

Բաւեյոյսի առեւտրականներ. — Սոյն երկու հանրապետութիւններուն Լորտ Բոպէրդսի յայտարարութեամբ Անգլիոյ կցուելէն ետք, կռիւն ա'լ աւելի սաստկացաւ (6 Սեպտ. 1900)

տոն դառնալով՝ անոր կը յաջորդէ) : Քիմպլըի նորէն վտանգի տակ է : Բլիւմմըր վըրայ կը հասնի և Տէվէդը սահմանագլուխէն անդին կը վանէ (24 Փետրվ.) :

Բանակցութիւնք Քիչնէրի և Պօթայի միջեւ. — Այս կռիւներու միջոցին, Անգլիոյ Վիքթորիա Թագուհին կը մեռնէր Օսպօրնի դղեակին մէջ (Յունվ. 17) և իրեն կը յաջորդէր Էտուար Է : Թէեւ Խորհրդարանի նոր ընտրութիւնները՝ Սալզպրի-Չէմպրլէնի դահլիճին վստահութեան քուէ տուած էին՝ հա-

ւանելով անոր արտաքին քաղաքականութեան, սակայն հաշտութեան կնքումը ամէնրան բերանին վրայ էր: Փերուար 2ին լորտ Քիչնէր և Զօր. Պօթա բանակցութեան մըպան, բայց երբ Պօթա հաշտութեան բանակցութիւններու հիմը ներկայացուց Շթայն և Շալք-Պիւրլըր նախագահներուն, որոնք Օրանժն ու Թրանսվալը կը ներկայացնէին ի Միտլպուրկ, հարկ եղաւ խզել յարաբերութիւնները:

Բրեդորիայի և Եօհանէսպուրկի մօտերը:

Հաճութիւն. — Անգլիա ու գաղութները անդադար զօրք կը ղրկէին: Պօէրները որքան որ քաջութեամբ կը կռուէին՝ միշտ կը տեսնէին որ իրենց թիւը նուազելու վրայ է և իյնողներուն տեղը բռնող չկայ: Ամբողջ երկիրը աւերակ մը դարձած էր: Քրիւկէրի ջանքերը և Տոքթ. Լէյտսի դիւանագիտութիւնները չոր համակրութեան ցոյցէ աւելի բան մը չկրցին քաղել Եւրոպայէ: Լոնտոնի



Լորտ Քիչնէր

Պօերները Եօհանէսպուրկի և Բրեդորիայի շրջակայները. — Լորտ Քիչնէր նորէն պատերազմը ձեռք առնելով, ռազմագիտական գերագոյն ճիգեր բրաւ Պօէրները պաշարելու համար. բայց պարսպ տեղը իր կողմած ճակատները կանոնաւոր բանակներ կըրնային ետ մղել, սակայն « անտեսանելի թշնամիի մը » դէմ կռուելով՝ միշտ վրայ կուտային: Վերջապէս դործերը անանկ վիճակի մը հասան որ Պօէրները կը տեսնուէին

մէջ խակ ճակատները կ'սկսէին մռայլիլ պատերազմին տեւողութեան անսահման ժամանակին վրայ: Արդէն Պօէրները պատրաստ էին հաշտուելու ինչ պայմանով ալ ըլլար, միայն իրենց ինքնօրէնութիւնը վրայ չիտային: Ի վ Մր. Չէմպրլէն՝ թշնամիին յուսահատ դիմումէն աւելի բան մը քաղելու համար անպայման անձնատուութեան վրայ կը յամառէր:

Բոլոր այս խորհուրդները որոնք խաղա-


դուրթեան և հաշտութեան կը ձգտէին, բարձր դրութեամբ մը կ'սպասէին իրագործուելու համար: Այդ դրութեամբ տուաւ էտուար է: Չուզելով որ իր գահակալութեան օրը՝ ուր ամէն անգլիացի սիրտեր ուրախութենէ բարախելու են՝ անգլիական ազգը կուրծքին վրայ բաց ունենայ զինքը կրծող վէրքը, փափաք յայտնեց խաղաղութիւնը հաստատուած տեսնել իր բոլոր երկիրներուն մէջ. ուզելով նաեւ թագադրուիլ իշխանութեան մը վրայ որու ոչ մէկ մասին ստացուածքի իրաւունքը վէճի տակ ըլլար: Ուրիշտորի դղեակին մէջ Մր. Չէմպրլէն շատ մը ունկընդորութիւններ ընդունեց իր Վեհապետէն եւ իբր հետեւանք՝ Բարեյոյս մեկնեցաւ յատուկ պատգմաւոր մը: Անգլիա՝ Պօէրներուն կը շնորհէր ամէն կարելի առանձնաշնորհում. երկրին ներքին կառավարութիւնը Պօէրներուն ձեռքը պիտի ըլլար, իրենց մայրենի լեզուն պաշտօնապէս պիտի ճանչցուէր. Անգլ. կառավարութիւնը պիտի չինէր աւերեալ ագարակները և ետ դարձնէր պօէր գերիները: Մինակ երկու նախկին հանրապետութեանց արտաքին քաղաքականութիւնը Լոնտոնի կառավարութեան պիտի անցնէր:

Այսօր՝ Անգլիացի ու Պօէր եղբոր պէս իրարու գիրկ են: Պօէրները կը յարգեն Անգլիացիները՝ դէպի պարսեալը ցոյց տուած իրենց ազնուութեան համար. Անգլիացիները կ'ակնածին Պօէրներէն իբր արժանի մրցակիցներ:

ՁԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ջին խրատնիս պիտի ըլլայ ասանկ անվայել միջոցներու չդիմել, հապա՝ մայրիկէն խնդրեցէք որ պէտք եղածը տայ, ու այնպէս գործի ձեռնարկեցէք:

Նիւթեր. — Պէտք է ունենաք շիշի խիցեր, սուր զմելի մը, գուլպայի ասեղ մը, կարի խոշոր ասեղ մը, ձիւ պայտի ձեւով մագնիս մը, բարակ երկաթէ թել, գնտա-




(Պատ. 1, 2, 3, 4, 5, 6.)

սեղ, շերամի բոժոններ, վերջապէս կապարէ կամ թիթեղի թերթ մը և այդ մեծաղը կտրելու համար մկրատ մը:

ՍԱԳԸ. — Խիցի մը մէջ սագին մարմինը կտրեցէք, կենդանին ջուրին մէջ շիտակ

ԼՈՂԱՑՈՂ ՍԱԳԸ

Ուշադրութիւն ըրէք, որովհետեւ կրնայ ըլլալ որ մասերնիդ կտրէք, աչքերնուդ մնասէք, այրուցքներ առնէք, ջրաթաթաւ ըլլաք, փայտի կտորտուքներով տունը վերէն վար աղտոտէք, նոր կ'կրատ մը փթացնէք:—Կրնայ ըլլալ որ այս խաղին համար պէտք եղածները ձեռք անցնելու համար՝ մայրիկին կարի կողովէն կամ մեծ քուրիկին դարակէն առնէք առանց հարցնելու. առա-




(Պատ. 7)

բանելու համար մարմինն տակէն երկայնքին ճեղք մը բացէք ուր պիտի անցնէք կապարի թերթը: Գլուխը շինելու համար, երկաթի բարակ թել մը ծռեցէք սագին վիզին ձեւով և վրան բոժոնները կապեցէք. թելին երկու ծայրերը՝ խիցին վրայ, վիզին


տեղը բացուած երկու ծակերու մէջ հաստա-
տեցէք: Ամբողջ մարմինին վրայ գնտասե-
ղով բժոժներ խոթեցէք կարգաւ. մարմինին
երկայնքէն տաքցած հաստ ասեղով ծակ մը
բացէք և մագնիսացած ասեղ մը անցուցէք

Պատ. 1. խցանի մը մէջ կտրուելիք սա-
գի մարմինին ձեւը: Ա. կապարի թերթը
որ կենդանին մարմինը հաւասարակշու-
թեան մէջ պիտի պահէ: — Պատ. 2. Սա-
գին մարմինը՝ վրայի կողմէն տեսնուած: —



(Պատ. 8)

Պատ. 3. Սագին մարմինը՝ տակի կողմէն
տեսնուած. Բ. կապարի թերթին մտնելիք
ճեղքը: — Պատ. 4. Սագին գլուխը շինե-
լու համար ինչպէս ծռելու է երկաթի թելը:
— Պատ. 5. Թելին վրայ մետաքսի բժոժ-
սեւ ու կանաչ գոյնով՝ փաթթուած է: —
Պատ. 6. Սագը լմացած. գնտասեղով խօթ-
ուած կարգ կարգ բժոժներ կռնակը կը ծած-



(Պատ. 9)

կեն. մարմինին մէջէն կ'անցնի մագնիսացած
ասեղը:


ԶՈՒԿԸ. — Զուկի մը մարմինը կտրեցէք
երկայն խիցի մը վրայ և կամ երկաթէ թե-
լով իրար կապուած մէկ քանի խիցերու վը-
րայ. վարի կողմէն կապարի թերթ մը ան-
ցուցէք մարմինին երկայնքին ուղղութեան՝
կենդանին ջուրի մէջ հաւասարակշիռ պա-
հելու համար: Երկու կողմերէն բարակ շեր-

տեր մէջ յմէկ ծայրերէն կտրելով վեր վեր-
ցուցէք՝ լուղակները ձեւացնելու համար:

Պատ. 7. Զուկը՝ խիցի մէջ փորուած:
Ա. Մագնիսացած ասեղը: Բ. կապարի թերթ
մը՝ ձուկը հաւասարակշիռ դիրքի մէջ պա-
հելու համար: — Պատ. 8. Զուկը՝ տակի
կողմէն տեսնուած: Ա. կապարի թերթը
անցնելու համար բացուած ճեղք: Բ. Լու-
գակները ձեւացնելու համար մէկ կողմէն
վեր կտրուած խիցը:

Այս կենդանիներէն քանի մը հատ շի-
նելով մեծ աման մը ջուրի կամ պարտէզը
աւազանին մէջ դրէք: Եթէ մագնէսի կտոր
մը մօտեցնենք անոնց, բոլորն ալ կը շարժ-
տրկին և դէպի անոր կը վազեն: Եթէ կեն-
դանիներուն մարմինէն անցուցած ասեղնիդ
մագնիսացած ըլլայ, կը բաւէ երկաթի կը-
տոր մը միայն մօտեցնել անոր:

Ասեղ մը մագնիսացնելու համար, մէջ-
տեղէն կախուած պայտածեւ մագնիսի մը
ծայրը թողուցէք քանի մը օր: Եւ կամ, ա-
ւելի շուտ ըլլալու համար, ասեղը՝ մագնի-
սին մէկ ծայրին վրայ շփեցէք, միշտ միեւ-
նոյն ուղղութեան մէջ: Մագնիսացած ա-
սեղները բնաւ մի տաքչէք:



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Վ Է Պ

Ժ Խ Ի Լ Վ Է Ր Ն

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ԴԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 22րդ քիւէն)

Երկնակամարը կազմուած էր խոշոր տմ-
պերով, փոփոխուն ու յարաշարժ շոգինե-
րով՝ որոնք խտանալով հեղեղանման անձ-
րեւներ պիտի ձեւացնէին: Հիմա « օղբ գե-
ղեցիկ էր », ելեքտրական հասանուտներ՝
բարձր ամպերո ն վրայ չողողուն լոյսի ճա-
ռագայթներ յառաջ կը բերէին:

Միտքս ինկաւ Անգլիացիի մը սա տե-
սութիւնը թէ երկիրս մէջը պարապ գունտ
մըն է, որուն ներսը օդին ահագին ճնշու-

մին հետեւանօք լուսաւորուած կը մնար. երկու մոլորակներ, Բլիւդօն և Բրօզէրբին, իրենց շրջանը կը կատարէին այդ պարապութեան մէջ: Սրգեօք իրա՞ւ էր ատիկա:

Ճշգրիտ կերպով խօսելով տեսակ մը քարայրի մէջ էինք որու լայնքն ու երկայնութիւնը չափել անհնար էր, որովհետեւ ծովուն ջուրերը՝ երկինքի ամպերուն հետ հորիզոն մը կը ձեւացնէին, որ կէտնային կը շարունակուէր դեռ այս ստորերկրեայ աշխարհը: Չէի կրնար բացատրութիւն մը գրտնել թէ այս ահագին քարայրը ի՞նչպէս բացուած էր և ի՞նչպէս հաստատուն կը մնար. ցեղունը կազմող կրանիթը ո՞ւր տեղէն յենակէտ մը գտած էր, կարելի չէր պատասխան մը գտնել:

Այս տեսարանին նորութիւնը, ճնշեալ օդին պարունակած թթւածինը՝ ազդեցին աւողջութեանս վրայ ու երեսոս գոյն եկաւ: Քառասունըթօթ օր մութ ծակերու մէջ քաշքշուէլէ ետքը չէք կրնար երեւակայել թէ ի՞նչ բերկրութեամբ կը շնչէի այս թեթեւ զեփիւրը: Հօրեղբայրս ինծի չափ չէի հիւանար, արդէն քանի քանի անգամներ դիտած էր այդ տեսարանը ինչ առաջ:

— Քիչ մը պտտելու չափ ոյժ ունի՞ս, հարցուց:

— Հապա՛:

— Եկուր ուրեմն, Աքսէլ, թեւս մօտիւ և ծովեզերքն ի վեր երթանք:

Յօժարաւորութ ընդունեցի և ճամբայ ելանք: Ձախ կողմերէն կը բարձրանային դարուվայր ժայռեր, որոնց մէջէն բարձր գետեր անհամար ջրվէժներ ձեւացնելով կ'երթային ծովին մէջ կորսուելու: Բարձր հրաւանդանի մը անկիւնը դարձած էինք երբ անակնկալ անսարան մը ուշադրութիւնս գրաւեց: Անտառ մը, բարձր խիտ, կը պարզուէր աչքերնուս առջեւ: Ծառերը միջակ մեծութեամբ էին, ճիւղերն ու տերեւները իրար անցած՝ տեսակ մը խիտ անթափանց հովանոց կը ձեւացնէին:

— Սունկի տնտառ մըն է ասիկա, ըսաւ հօրեղբայրս:

Իրաւ ալ չէր սխալէր. ահագին սունկեր երեսուն քառասուն ոտք երկայնութեամբ և գրեթէ նոյնչափ տրամագծով գլուխներով՝ հազարներ հաւաքուած անտառ մը կը ձեւ-

ւացնէին: Բայց մինակ ասոնք չէին կազմեր այս ստորերկրեայ բնագաւառին բուսականութիւնը. քիչ մը հեռուն կը բարձրանային ոսկեփայլ տերեւներով ծառեր, որոնք պարզապէս մեր գետնամոմուռներն էին հարիւր ոտք բարձրութիւն մը ունենալով, ծառաբերձ պտերներ, ցցուած փուշերով թեփածառեր, հօտիսայներ:

— Ի՞նչ սքանչելի է, գոչեց հօրեղբայրս, այս երկրորդ շրջանի բոյսերու մեծութիւնը. կը տեսնե՞ս Աքսէլ, բոլոր այս հսկայաբերձ ծառերը՝ մեր պարտէզներուն մէջ ցածուկ խոտեր են:

— Իրաւունք ունիք հօրեղբայրս, կարծես թէ բնութիւնը դիւսմամբ պահած է այս բոյսերը տեսակ մը ջերմանոցի մէջ:

— Մինակ ջերմանոցը չէ՛, տղաս, կարելի է գառազեղն ալ կայ: Տե՛ս սա ոսկերոտիները:

Ոտքերուս տակ նայեցայ. ջրհեղեղէն առաջ ապրող կենդանիներուն այս անջնջելի միացորդները ցիրուցան էին ահագին դաշտին մէջ. ամէն մէկ ոսկորին՝ առանց վարակելու իր անունը կուտայի:

— Ասիկա պտկաժանիի մը ստորին կըզակն է, կ'ըսէի ասիկա այլակենդանի (dinotherium) ակաւն է. իսկ ասիկա մեծագաղան (megaterium) ուսուկն ըլլալու է:

Բոլոր այդ կենդանիները այս ծովին եզերքը ապրած են, հսկայաբերձ տունկերու հովանիին տակ, անկարելի է որ բնական յեղաշրջում մը հոս բերած ըլլայ անոնց ոսկերոտիները: Տեսէ՛ք, նոյն իսկ ամբողջ կըմախքներ կան. բայց...

— Բայց ի՞նչ... հարցուց հօրեղբայրս:

— Չեմ հասկնար թէ ի՞նչպէս կ'ըլլայ այս կրանիթէ քարայրին մէջ առանկ չորքոտանիներ ապրած են:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ կենդանիները՝ երկրորդական դարու տեւողութեան միջոցին միայն երեւցած են երկրիս վրայ, նոյն ատենները՝ երբ միջոցին հողերը՝ հրաբխային ժայռերը ծածկելով նոր ցամաքներ կը ձեւացնէին:

— Կրնամ ըսել թէ, Աքսէլ, այս հողը միջոցին է:

— Երկրիս երեսէն այսչափ խորունկ մըր-

րային հողը ի՞նչպէս գոյութիւն կ'ունենայ :

— Տե՛ս թէ ինչպէս կը մեկնեն այս երեւոյթը երկրաբանութեան մէջ : Ատեն մը եղած է որ երկրիս կեղեւը դեռ առաձգական էր, ու կը հպատակէր՝ ծանրութեան օրէնքներուն համաձայն, վերէն ու վարէն եղած ճնշումներուն : Կարելի է որ տեղ տեղ գետիկի բարակ խաւը փլչելով՝ մրրային հողերու մեծ մաս մը բացուած վիճին մէջ գըլտորեց :

— Այդպէս ըլլալու է. կարելի է հիմա իսկ այդ գազաններէն դեռ կենդանի եղողներ գտնուին :

Եւ սոսկումով չորս կողմն ակնարկ մը նետեցի, բայց բնաւ կենդանի արարած մը չը կրցի տեսնել :

Բաւական յոգնած էի արդէն. հրուանդանի մը ծայրը նստանք քիչ մը յոգնութիւն առնելու համար : Իյս ամայի ծովը կը տարածուէր անսահման եւ օդին մշուշներուն հետ հորիզոն մը կը ձեւացնէր. ո՛ւր կը վերջանար արդեօք միւս ծայրը. կարելի պիտի ըլլա՞ր արդեօք միւս եզերքը հասնիլ : Հօրեղբայրս բնաւ չէր կասկածէր ատոր վրայ. իսկ ես՝ թէ՛ ատանկ ըլլալը կը բաղձայի եւ թէ՛ կը վախնայի :

Ժամ մը յոգնութիւն առնելէ վերջը քարայրը վերադարձանք՝ ուր խորունկ քունի մը մէջ ինկայ :

ԼԱ.

Յաջորդ առտուն բոլորովին աղէկցած էի. Աղուոր նախաճաշ մը ընելէ ետքը ծովեզերքը իջանք :

— Մակընթացութեան ժամանակն է հիմա, ըսաւ հօրեղբայրս. աղէկ դիտենք այդ երեւոյթը :

— Ի՞նչպէս, գոչեցի, լուսինին ու արեւին ազդեցութիւնը մինչեւ հոս չգալի կ'ըլլա՞յ :

— Շատ պարզ է. ամէն մարմին տիեզերական ձգողութեան ենթակայ չե՞ն միթէ. ինչու համար ուրեմն այս ջուրի զանգուածը չպիտի հնազանդի այդ օրէնքին : Հակառակ մակերեւոյթին վրայճնշող մթնոլորտի ծանրութեան, պիտի տեսնես որ ամբողջ ջուրերը պիտի բարձրանան Աղլանտանին պէս :

Արդէն ջուրերը բարձրանալ սկսած էին, պզտիկ ալիքներ կազմելով, որոնք եզերքի աւազներուն վրայ կը փշրէին :

— Կը տեսնե՞ս, Ա. քսէլ, ըսաւ հօրեղբայրս, այս ալիքներէն դատելով մակընթացութիւնը մինչեւ տասը ոտք պիտի ելլէ :

— Սքանչելի՛ է :

— Ո՛չ, բնական բան մըն է :

Թարգմ.

ՋԱՐԵՀ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շարունակելի)

ՋԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԱՅՑԱՔԱՐԴԵՐՈՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐԸ

Մէկ լեզուէ միջակ թուղթ 100 հատը	7 ղշ.
Երկու » » » » »	9 »
Երեք » » » » »	11 »
Մէկ » ընտիր » » »	8 »
Երկու » » » » »	10 »
Երեք » » » » »	12 »
Ոսկեզօծ եզերքներով ընտիր թուղթ	16 »
» » գունաւոր » » »	17 »
» թրթրւը եզերք. ձերմակ » » »	17 »
» » » գունաւոր » » »	18 »

Թուրքերէն Սիւլիս, Թաալիւք եւ Րեզգա գրով փորագրեալ այցաքարներուն համար՝ 12 ղրշ. աւելի ծախք մը վճարել պէտք է :

Լուսանկարով միասին տպագրեալ այցաքարներուն 100 հատը 60 ղրշ.

Գաւառներէ եղած յանձնարարութեանց համար թղթատարի ծախք չի պահանջուր : Վճարմունք կանխիկ են :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ՆՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » » » »	4
Ծաղկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ Քերական	2
Կ. Տէմիրեան էֆ. Ի Իրադիտութեան Ամբողջական դասընթացքը :	
Ծաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Սուրբ Երկիր կամ Տեղագրութիւն Ս.	
Երուսաղէմի (պատկերազարդ)	10
Քրիստոնէական (Ս. Պանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղօթագիրք	10

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ՝ կը հրատարակուի ամէն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին			
Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԱՐ		ՀԱՍՑԷ	ԳԱԽԱՌՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը	40 դահեկան	ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Տարեկանը 45 դահեկան
Վեցամսեան	20 »	Կ. ՊՈԼՍ	Վեցամսեան 25 »
Եռամսեան	10 »	ՊԱՊ ԱԼԻ ՃԱՏՏԵՍԻ	Եռամսեան 12 1/2 »
ՌՈՒՍԻՈՅ ՀԱՄԱՐ		ԹԻՒ 38	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկանը	4 ըուպի		Տարեկանը 10 ձրանք

Ձեռք: կը ծախուի կտար 10 փարա;

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ

Հանրագիտակի վեցամսեայ բաժանորդներէն շարունակ գանգատներով լեցուն նամակներ կը հասնին մեզ եւ կը հարցնեն թէ ինչո՞ւ թերթերը դադարած են. նոյնպէս տարեկան արձանագրողներէն ոմանք դժգոհութիւն կը յայտնեն թէ՛ շատ ուշ կը հասնին թերթերը իրենց ձեռքը:

Առաջիններուն կը պատասխանենք թէ՛ իրենց գանգատագիրներուն հետ մոռցեր են կցել վեցամսեայ բաժնեգիրը, ուսկից յառաջ կուգայ իրենց թերթին դադարումը. իսկ երկրորդներուն՝ կը յայտնենք թէ՛ ինչո՞ւ իրենց դժգոհութեանց հետ չեն զրկեր վեցամսեայ կամ տարեկան բաժանորդագիրը:

Գանգատներով, դժգոհութիւններով չէ որ պիտի պահպանուի Հանրագիտակի գոյութիւնը, եւ մենք ալ սոյն թերթը ձրի բաժնելու համար չի հաստատեցինք: Միանգամ ընդ միշտ կը յայտարարենք որ անվրձար մնացած վեցամսեայ բաժանորդներուն թերթերը դադրեցուցած ենք, նոյնպէս տարեկան արձանագրող եւ մինչեւ ցարդ իրենց պարտքը չհատուցանողներու թերթերն յաջորդ թիւէն պիտի դադրեցնենք:


Սոյն առթիւ, ցաւելով կը յայտնենք որ բաւական թուով անձինք, որոնց սկիզբէն ի վեր շարունակ թերթ զրկած էինք, երբ բաժնեգիրները պահանջելու ելանք, կը պատասխանեն թէ՛ իրենք թերթ չեն ուզած, այլ խմբագրութեան կողմանէ զրկուած, ուստի ո՛չ դրամ կը վճարեն եւ ո՛չ ալ ընդունած վեցամսեայ թերթերը ետ կուտան:

Այսպիսի բնթացք մը ունեցան թեքիւրտաղ, Պալըքէսէր եւ Ատաբաղար գտնուող բաւական անձինք, եւ մենք կարմրելով կ'ըրգացինք ընդունած պատասխանին:

Արդ կ'ազդարարենք սոյն կարգի անձանց

որ՝ կա՛մ թերթերը մեզ վերադարձնեն եւ կա՛մ բաժնեգիրը վճարեն, հակառակ պարագային իրենց անուններով պիտի հրատարակենք հանդէսիս մէջ:

Արդեօք չկարդացի՞նք առաջին եւ երկրորդ թիւերուն հետ իրենց զրկուած հրաւիրագիրը թէ՛ եթէ չեն ուզեր հանդէսիս բաժանորդ գրուիլ, թերթերը մեզ վերադարձնեն: Եթէ տառը տարի իրենց թերթ չլիէինք ձրի կարդալու մտադրութիւնն ունէին:



Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար գլխակ մինակ սոյն հասցէին

Մեր նոր հասցէին ուշադրութիւն ընել կը խնդրուի:

نشانه بربریان مطبعه جی

استانبول باب عالی جاده سی و سوم ۳۸

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԿՐԻՉ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պաղ-Ալի Ճատտէսի րիւ 38

NICHAN BERBÉRIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Stamboul, Bab-Ali Djaddéssi N. 38

Կը խնդրենք մեր Մեծ. Գործակալներէն եւ Բաժանորդներէն՝ որ Հանրագիտակի Պրդ եւ Պրդ թիւէն աւելորդ եթէ ունին՝ մեզ վերադարձնելու շնորհ ընեն:

ԽՄՐԱԴՐԱՊԵՏ — ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԱՌԻՍԻՆԵԱՆ

ՏՊԱԿՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն. ՇԱՆ. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պաղը Ալի Ճատտէսի, Թիւ 38, Իզտամ լրագրի դէմ

Իսկապէս ծաղաղանա՞ք

1998

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Հ Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն


Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՅԻԼԵԱՆ վաճառատունը պատրաստ և թէ օր ըստ օրէ ասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր խնմրցելի աժանութեամբ գոհացում առնոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՅԻԼԵԱՆ հատուածութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Այժմ, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք յանդամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՅԻԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի դտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի ճոխ միջերք մը: Ա. Ժ. Ա. Ն

ՆՇԱՆ Կ. ՓԵՐՓԵՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԸ Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՊԵ ԱԼԻ ՃԱՏԵՍՈՐ, ԹԻՒ 38, ԻՆՏԵՐ ԼԵՍԳՐԻ ԴԻՄԱՅ

Ստացած է տպագրական ճոր
կազմակերպութիւններ եւ կը տպագրէ ամեն տեսակ գիրքեր, մանաւորապէս՝ քաղաքականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այլ-ցախադրեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամեն տեսակ պիտոյքներ: Տպարանին սեփական 20000-է աւելի պատկերներ յանախորդաց տպագրութեան տակ են ձրի: Անմրցելի մատուցիւն եւ ճշգրտագործութիւն գաւառներէն ալ կ'ընդունին ամեն տեսակ յանձնարարութիւններ:



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն ժամանակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գրութեանց հետ ղրկել Խմբագրութեանս, հալաւակ պարագային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուի Պոլսոյ մէջ հատ 40, իսկ գաւառաց մէջ 50 փարայ: